Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ - 2022
8–րդ դասարան - 120 բոպե

N 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ (0,5 x 4 = 2 միավոր)

1. Ո՞վ դիմեց Պիղատոս Պոնտացուն՝ Հիսուսի մարմինը խաչից իջեցնելու խնդրանքով. *(0,5 միավոր)*

1) Սիմոն
2) Հովսեփ
3) Պողոս
4) Հովհաննես

2. Ո՞ր կաթողիկոսի գահակալության տարիներին հայրապետական աթոռը տեղափոխվեց Ծոփք. *(0,5 միավոր)*

1) Գրիգոր Դ. Տղա
2) Գրիգոր Բ. Վկայասեր
3) Գրիգոր Զ. Ապիրատ
4) Գրիգոր Գ. Պահլավունի

3. Ո՞ր երկրից ճգնավորական կամ անապատական շարժումը մուտք գործեց Հայաստան. *(0,5 միավոր)*

1) Ասորիք
2) Պարսկաստան
3) Պաղեստին
4) Եգիպտոս

4. Ի՞նչ է անվանում ժողովուրդը Համբարձման տոնին նախորդող գիշերը. *(0,5 միավոր)*

1) Համբարձման նախապատրաստություն
2) Համբարձման նախատոնակ
3) Համբարձման ճրագալույց
4) Համբարձման գիշեր

N 5-9

Կառուցված պատասխանով առաջադրանքներ
(1 x 5 = 5 միավոր)

5. Սերմնացանի առակում _____հողը բնութագրում է այն մարդկանց, ովքեր լսում են Աստծու խոսքը և իսկույն ուրախությամբ ընդունում այն: *(1 միավոր)*

6. Ծաղկազարդի հաջորդ շաբաթը կոչվում է _____: *(1 միավոր)*

7. X դարի երկրորդ կեսին_____ արքան սկսեց Անիի Կաթողիկե Մայր տաճարի շինարարությունը: *(1 միավոր)*

8. 485 թ. աշնանը _____ Վահան Մամիկոնյանին հանձնեց երկրի մարզպանի պաշտոնը: *(1 միավոր)*

9._____ ժողովից հետո Սմբատ Բագրատունին գնաց Բաղդադ, ուր բազմաթիվ հայ իշխաններ էին գերի տարվել: *(1 միավոր)*

N 10-11

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 4-5 փաստից

10. Կատարել համապատասխանեցում. *(1 միավոր)*

1. Խաղողի որթ	ա. արգավանդ	**1**	
2. Քառս	բ. վազ	**2**	
3. Պարարտ	գ. կառավարիչ	**3**	
4. Կուսակալ	դ. ուսուցանող	**4**	
	ե. անկանոն		

11. Իրադարձությունը համապատասխանեցնել տարեթվին. *(1 միավոր)*

1. Վրաց եկեղեցու բաժանումն Արևելյան եկեղեցական ընտանիքից	ա. 449 թ.	**1**	
2. Շահապիվանի ժողովի հրավիրումը	բ. 608 թ.	**2**	
3. Մեքքայի հպատակվելը Մուհամմադին	գ. 428 թ.	**3**	
4. Հազկերտ II –ի՝ հայերին ուղղված կրոնափոխության պահանջը	դ. 610 թ	**4**	
5. Մեծ Հայքի թագավորության վերածումը պարսկական մարզպանության	ե. 444 թ.	**5**	
	զ. 630 թ.		

N 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

12. *«Դառնալով Աղվանքի բանակի հրամանատար, նա միաժամանակ, դեռ հոր կենդանության օրոք, իր ձեռքն առավ ամբողջ երկրի կառավարությունը: Իր այդ գործերի համար երիտասարդ իշխանը ժողովրդական հերոս դարձավ»:*

1. Ո՞ւմ մասին է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

2. Ո՞վ է աշխատության հեղինակը: *(1 միավոր)*

_____

13. *«Հրաժարվելով աշխարհիկ կյանքից՝ նա (մտածեց) հավիտենական կյանքի մասին. լուսավորեց Հայաստանը բազում և տարբեր մեկնություններով, բոլոր լեզուներից թարգմանություններ կատարեց և Աստծո եկեղեցին լցրեց աստվածային սուրբ գրքերով: Նա հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը Հայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ: Նա պահեցող էր և աղոթող»:*

1. Ո՞վ է աշխատության հեղինակը: *(1 միավոր)*

_____

2. Ո՞ւմ մասին է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանքներ:

N 14

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ու՞մ անունն է ավելորդ: *(0,5 միավոր)*

Դավիթ, Աբրահամ, Ղուկաս, Սողոմոն, Հաբեթ:

_____

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կազմման սկզբունքին: *(0,5 միավոր)*

Ս. Ծնունդ, Ս. Հարություն (Զատիկ), Ս. Սարգսի տոն, Վարագա Ս. Խաչի տոն, Ս. Աստվածածնի վերափոխում:

_____

N 15

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(1 միավոր)*

ա. Մաշտոց Ա. Եղիվարդեցի, Ս. Հովհան Գ. Օձնեցի, Խաչիկ Ա. Արշարունեցի
բ. Անանիա Ա. Մոկացի, Գևորգ Բ. Գառնեցի, Հովհաննես Ե. Դրասխանակերտցի
գ. Զաքարիա Ա. Ձագեցի, Մաշտոց Ա. Եղիվարդեցի, Գևորգ Բ. Գառնեցի

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(1 միավոր)*

ա. Մաղաքիա արք. Օրմանյան, Խաչիկ Ա. Արշարունեցի, Առաքել Դավրիժեցի
բ.Կիրակոս Գանձակեցի, Հովհաննես Ե. Դրասխանակերտցի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ
գ. Ղևոնդ Ալիշան, Անանիա Ա. Մոկացի, Հովհաննես Ա. Դրասխանակերտցի

N 16

1. **Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ:** *(2 x 0.5 = 1 միավոր)*

1) Զզջումից, խոստովանությունից և քավությունից հետո եկեղեցում Հաղորդության խորհրդի միջոցով մարդը թողության է արժանանում, այսինքն՝ ներվում են նրա մեղքերը:
2) ՀՀ-ում գործում են հետևյալ թեմերը. Արարատյան Հայրապետական, Արթիկի, Սյունյաց, Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Սևանի, Արագածոտնի, Գուգարքի, Տավուշի և Կոտայքի թեմերը:
3) Ձեռնադրության խորհուրդը միշտ կատարվում է ժամերգության ընթացքում:
4) Մայիս ամսին նշվող կարևոր տոներից է Ս. Խաչի երևման տոնը: Այն հիշատակությունն է Ս. Խաչի գերությունից վերադարձի:
5) Զրօրհնեքի արարողության ժամանակ ջրի մեջ իջեցվում է Ս. Խաչը, որը խորհրդանշում է Հորդանան գետում Հիսուս Քրիստոսի մկրտությունը:

2. **Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ:** *(2 x 0.5 = 1 միավոր)*

1) Հայոց Ս. Հովհաննես Գ. Օձնեցի կաթողիկոսը շատ գեղեցիկ տեսք ուներ, մշտապես ոսկեհուռ զգեստներ էր հագնում և փառահեղ մորուքի վրա ոսկու փոշի էր շաղ տալիս:
2) Պավլիկյաններն ունեին իրենց դատարանները և շատ հաճախ դաշնակցում էին պարսիկների հետ:
3) V դարի երկրորդ կեսին բյուզանդական կայսրերը ստիպված էին միջամտել Քաղկեդոնի խնդրին՝ փորձելով հաշտեցնել դավանաբանական տարբեր ուղղությունների կողմնակիցներին:
4) Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոսը «Արևելքի իշխան» վեհ տիտղոսով է պսակում Զիվանշիր իշխանին:

5) Աղվանից (հետագայում՝ Գանձասարի) կաթողիկոսությունը գոյություն ունեցավ մինչև XIX դարի սկզբները և վերացվեց ցարական կառավարության հրամանով:

N 17

Շարադրանք *(2 միավոր)*

ա. Ներկայացրե՛ք Հռոմկլայի եկեղեցական ժողովը:
բ. Ներկայացրե՛ք Ս. Թարգմանչաց տոնը: